

Աղատրիա :

Բնականոր աշխարհագրական տեսու-
թիւն : — Բնդարձակութեամբ և բազ-
մամարդութեամբ Լաւրոպիոյ մէջ եր-
րորդ տէրութիւնն է Լէստրիա, և քա-
ղաքականութեամբ առաջիններէն մէ-
կը . կը ձգուի ընդ մէջ $42^{\circ} 7' - 51^{\circ} 2'$
Հիւս . լայն . և $6^{\circ} 12' - 24^{\circ} 14'$ արե-
ւելեան երկայնութիւն : Հիւսիսէն սահ-
մանակից է Բրուսիա և Սաքսոնիա , ա-
րեւելէն Ռուսաստան և Սիլեզիա ,
հարաւէն Տաճկաստան և Իտալիա , իսկ
արեւմուտքէն Սարդենիա , Հելլենտիա
և Պաւիերա : Բնդհանուր տարածու-
թիւնը միահամուռ 670,456 քառ . հա-
զարամէդր է , 37,000,000 բնակչոք՝ ու-
րոնց 9 միլիոնը Գերմանացի են ազգաւ ,
15 միլիոն Սլաւ , 3 միլիոն Իտալացի ,
5 միլիոն Սաքսոն , 3 միլիոն Սիլեզի-
ալի , 750,000 Հրէայք , 17,
000 Հայք և ուրիշ խել մը փոքրիկ ժո-
ղովուրդներ : Լայնաւոր աշխարհաւան և
աշխարհու ազինք զարմանալի քաղաքա-
կանութեամբ մը կառավարուելով Լա-
ւրոպիոյ հզօր կայսրութիւններէն մէկը
կը կազմեն , որուն կեդրոնն ու մայրա-
քաղաքն է Վիեննա :

Լէստրիա 17 գլխաւոր նահանգ կը
բաժնուի և են .

Նահանգ .	Գլխաւոր քաղաք .	Բնակչ .
Ա . Վերին Աւստրիա . Վեննա . . .		430,000
Բ . Ստորին Աւստրիա . Լինց . . .		30,000
Գ . Սալցպուրկ . . . Սալցպուրկ . . .		18,000
Դ . Սթիրիա . . . Կրաց . . .		52,000
Ե . Իլլիրիա . . . Դրինա . . .		76,000
Զ . Դիւրն . . . Իննսպրուք . . .		15,000
Է . Պոհէմիա . . . Բրաւա . . .		120,000
Ը . Մորաւիա . . . Պրիւնն . . .		43,000
Թ . Շլէզիա . . . Դրոքաւ . . .		15,000
Ժ . Խառնագոյց և Սկաւ- ւոնաց երկիր . . . Ակրամ . . .		17,000
ԺԱ . Սերուիա և Դրմըշ . Դրմըշ . . .		16,000
ԺԲ . Դրանսիլանիա . Գլազգէնպուրկ . . .		25,000
ԺԳ . Կարինթիա . . . Լէմպերկ . . .		76,000
ԺԴ . Դաւանտիա . . . Ծարա . . .		8,000
ԺԵ . Ունկարիա կամ Մա . Պուտա կամ Օ- ճառստան . . . Ֆէն . Բէշթ . . .		50,000 և 85,000
ԺԶ . Վենետիկ . . . Վենետիկ . . .		120,000
ԺԷ . Զինուորական սահմանք		

Լայն գաւառներս մեծաւ մասամբ
լեռնային են , բաց 'ի հիւսիսային Կա-
լիցիոյ և Ունկարիոյ լայնածաւալ դաշ-
տերէն՝ որք անուանի են մշակութեան
կողմանէ . իրեք գլխաւոր լեռնաց գօտիք
կը շրջապատեն Վէստրիա , և են Ա . Լե-
պեանք հարաւային կողմանէ՝ որք Գի-
րոլէն սկսեալ կ'երկըննան մինչև յՈւն-
կարիա և մինչև Տաճկաստանի սահ-
մանները : Բ . Կարպաթեան լեռինք՝ ու-
րոնք Գանուբի հիւսիսային կողմը կ'իյ-
նան և Ունկարիոյ հիւս . կողմը կը
շրջապատեն : Գ . Սիւտէդ լեռինք , որք
Կարպաթեանց հետ միանալով կը պա-
տեն զՊոհէմիա և զՍորաւիա . բար-
ձրագոյն լեռներն են () յոլէր , Սթից և
Կրոյ-Կլքներ՝ 12,000 ոտնաչափ բար-
ձրութեամբ՝ Գիրոլի սահմանին մէջ :
— Լէստրիոյ և Լաւրոպիոյ մէջ մեծա-
գոյն գետն է Գանուբ՝ 1,270 հազա-
րամէդր երկայնութեամբ՝ որն որ եր-
կոտասան մեծամեծ քաղաքաց քովերէն
անցնելով երկու կը բաժնէ զբոլանդակ
Լէստրիա և կը թափի 'ի Սեաւ ծով :
Լէջ կողմանէ այս գետիս հետ կը խառ-
նուին Ինն , Գրաւն , Լանս , Գաապ ,
Տրաւ , Սաւ . և ձախ կողմանէ՝ Սորա-
ւա , Թայս և ուրիշ մանր գետակներ :
Գարձեալ Գաղմասիոյ գետերուն մէջ
նշանաւոր է Վիլլա և Գարինդա .
Կալիցիոյ մէջ Տնիտզեր . իսկ () տէր
և Սիլեզիա 'ի Սորաւիա : Հանդերձ
այսչափ գետերով ճոխագոյն է նմանա-
պէս Լէստրիա ընդարձակ և ձկնաբեր
լճերու կողմանէ ալ որ շատ մեծ օգուտ
կը բերեն երկրին :

Սլեմայ , Բերք . և Ճարդարութիւն : —
Լէստրիոյ կլիման ամէն տեղ միակերպ
չէ՝ այլ ըստ գաւառաց գաւառաց կը զա-
նազանի , ինչպէս հարաւային մասը որ
ընդարձակագոյնն է՝ բարեխառն և ա-
ւելի ջերմին , իսկ հիւսիսայինը ցրտին
և ոչ այնչափ առողջարար : Լայց երկի-
րը 'ի հասարակի բարեբեր է , և գրե-
թէ ամէն տեսակ կարեւոր արմտիք կը
բերէ . որթոյ մշակութեան բաւական
խնամք կ'ըլլուի՝ և անուանի են Ունկա-
րիոյ զինները , Գլխաւոր բերքերն են

ընդեղէնք, պտուղ, փայտ, վուշ, կանեփ, հուպլոն, ծխախոտ, ներկի փայտ ։
 Լըջառեղինաց մէջ յարգի են Վերմա-
 նիոյ կովերն, ոչխարները և երիվարը ։
 — Լնուանի են Լստորիոյ հանքերը՝
 թէպէտ և տէրութեան հարստանալուն
 մեծ նպաստ մը չըլլան ։ Տարին կ'ելլէ
 2,000 լիտր ոսկի, 50,000 լիտր արծաթ,
 1,500 կենդինար անդիկ, 60,000 կեն-
 գինար պղինձ, 1,300,000 կենդինար
 երկաթ, 6 միլիոն կենդինար աղ ևն ։
 — Լշանաւոր են Պոհեմիոյ և Ունկա-
 րիոյ հանքային ջրերը որոնք ատապե-
 լոց շատ մեծ օգուտ կ'ընեն ։ Երբին
 վաճառականութիւնը թէպէտ ըստ բա-
 ւականին յառաջացեալ է՝ բայց գեռ հա-
 մեմատութեամբ Վաղղիոյ, Լնգղիոյ,
 Պելճիոյ և Բրուսիոյ ստորին է ։ Լյս-
 մասիս մէջ Լստորիոյ ետև մնալուն թե-
 րևս գլխաւոր արգելք մը կը համարուի
 մաքսի խիստ օրէնքը՝ զոր տէրութիւնը
 կը ջանայ հիմա կամայ կամայ թեթեւ-
 ցընելու ։ — Զեռակերտից ճարտարու-
 թիւնը Յովսէփ Բ կայսեր ժամանա-
 կէն սկսեալ հսկայաբայլ կը յառաջա-
 նայ և խաղաղական գաւառներով մէկ-
 տեղ յիս իրս Լարուպիոյ միւս տէրու-
 թեանց հետ նախանձորդ է ։ և մասնա-
 ւորապէս յիշատակութեան արժանի է
 Սեննա մայրաքաղաքը՝ ուր մեծ կատա-
 րելութեան հասած են երաժշտական
 գործիքներն և ուրիշ զանազան տեսակ
 արուեստները, որով Լարուպիոյ անուանի
 մայրաքաղաքներէն մէկն է ։ — Ընդհա-
 նուր խօսելով նշանաւոր են Լստորիոյ
 կտաւի, ասուի, մետաքսի, երկաթե-
 ղինաց և ապակեղինաց ձեռագործնե-
 րը ։ Իսկ տէրութեան սովնէն աւելի
 յառաջացեալ գաւառներն են Լըշի-
 դըքսութիւնն Լստորիոյ և Պոհեմիա ։
 Ունկարիոյ առաւելութիւնը երկրին
 բնական բերքերն են ։ Յամաքային շա-
 հաստանքաղաքներն են Սեննա, Բրա-
 կա, Բէշդ, Օեմլին, Պրոտի, Լինց,
 Արաց, Լատէնպուրկ, Վարըզատ,
 Պրիւն, (Եմիւց և այլն ։ Ծովայիններն,
 Վրիեստ, Սենետիկ, Ֆիուլմէ, Ուա-
 կուզա, Ուսկինիոյ և այլն ։

Նանապարհէ և Զանգ ։ — Լաւարկե-
 լի գետ մի միայն կայ Լստորիոյ մէջ և
 է Վանուբ, ուր կ'երթան կեն անընդ-
 հատ շոգեշարժ նաւեր ։ — Լըկաթեայ
 շաւիղներուն մէջ նշանաւոր են Լմիւն-
 տէնայ ըսուածը 45 փարսախ երկայնու-
 թեամբ, ընդ մէջ Պուտվայսայ և Լը-
 միւնտէնի ։ Հինգ գլխաւոր քաղաքաց
 հետ հաղորդակցութիւն ունի Սեննա
 երկաթեայ շաւիղներով, առաջինը կը
 ձգուի Սեննայէն մինչև 'ի Պոնիա
 քաղաք Լալիցիոյ՝ շատ մը քաղաքներէ
 անցնելով ։ երկրորդը կ'երթայ մինչև
 ցլաապ, երրորդը 'ի Լայըզատ, չոր-
 րորդը 'ի Վրիեստ և 'ի Սենետիկ,
 հինգերորդը 'ի Տրեզտա ։ — Ծրանցք-
 ներուն մէջ նշանաւոր է Ֆրանց, ձգեալ
 Վանուբայ և թայսի մէջ, Սեննայի
 ջրանցքը որ Լայըզատի հետ կը հաղոր-
 դուի և այլն ։ Իսկ Լատալիա աւելի բազ-
 մաթիւ են ջրանցքները ։

Բարբառ, Կրօն և Ուսմանք ։ — Վեր-
 մանական լեզուն, որ ինչպէս ծանօթ է
 ընթերցողաց տնուանի է Լարուպիոյ մէջ
 իր հարստութեամբն ու արդի զարգա-
 ցեալ գրականութեամբը, կայսրութե-
 գլխաւոր և սրաշտօնական լեզուն կը սե-
 պուի, միայն Ունկարիոյ մէջ Լատին՝ և
 Լատալիա խաղաղական լեզուները կը գոր-
 ծածուին ։ երկրորդ տարածեալ լեզուն
 է Սլաւեանը որ հինգ ձիւղ կը բաժ-
 նուի ։ — Լայսրութեան մէջ եօթը զա-
 նազանեալ կրօնք կան, թէպէտ և տե-
 րութեան գաւառածը կաթոլիկէ Ուղ-
 զափառ հաւատքն է՝ զոր 26 միլիոն հո-
 գիք կը դաւանին ։ ասոնցմէ դուրս 3 մի-
 լիոն Հռովմէական Յոյնք և նոյնչափ
 մ'ալ բաժանեալք, 3,750,000 այլ և
 այլ տեսակ ազանդաւորք և 750,000
 Տրէայք ։ Հռովմէականք 14 Լըքեպիս-
 կոպոս և 59 Լպիսկոպոս ունին ։ միա-
 ցեալ Յոյնք 2 Լըքեպիսկոպոս և 7 Լ-
 պիսկոպոս՝ իսկ բաժանեալները 1 Լըք-
 եպիսկոպոս և 7 Լպիսկոպոս ունին ։ —
 Լստորիոյ մէջ ուսմունքը և կրթութիւ-
 նը գեռ Վերմանիոյ միւս տէրութեանց
 չափ յառաջացած չէ, 'ի վերայ այսր ա-
 մենայնի շատ մեծ գրգիռ և ջանք կայ

զուամիկը զարգացրնելու և նոր վարժա-
րաններ բանալու : Դո՛ւր տէրութեան
մէջ 9 համալսարանք կան , որոնց հին-
գը Վերմանական դաշնակցութեան
մաս սեպուած կտորին մէջ են և չորսը
դուրս . ամենուն մէջ առաջին և անուա-
նի է Ս Էննայի համալսարանը՝ որ 1365ին
հաստատուած է . հռչակաւոր են դար-
ձեալ մայրաքաղաքիս դիտանոցը , բու-
սաբանութեան պարտէզը , ուսումնա-
րանն բազմարուեստից , ճեմարանն ա-
րեւելեան լեզուաց , ճեմարան քեղա-
րուեստից , վարժոյն երաժշտութեան ,
վարժարան բժշկութեան անասնոց ,
ճեմարան աղնուականաց , բնական պատ-
մութեան ճիւղ թանգարան մը և այլն :

Եւ ի հոգի : Յամադային և ծովային զը-
րուիւն : — Բնաստիոյ տարեկան մուտքն
է մօտ 300 միլիոն ֆիորին . իսկ ծախքը
370 միլիոն : Տէրութեան պարտքն է
օտարաց և իր հպատակաց միանգամայն
2,350,418,960 ֆիորին :

Կրկին զինուորութիւն կան Բնաստիոյ
մէջ , մէկը վիճակով ընտրուածները , ու
միւսը՝ ի զինուորութիւն ծնածները՝
ինչպէս այս պարտականութիւնս ունին
Խուուադները , որոնցմէ միշտ 100 հա-
զար հոգւոյ բանակ մը պէտք է կազ-
մուի : Խոսղաղութեան ժամանակ Բնաս-
տիոյ զօրաց թիւը առ առաւելն 500

հազար է , 4 մեծ բանակ բաժնուած ,
բայց պատերազմի ատեն կարող է 700
հազարէն աւելի հանել : Բնաստիոյ պար-
տական է՝ իբրեւ մասն Վերմանական
դաշնակցութեան , 94,000 հոգւոյ բա-
նակ մը պահելու ընդդէմ Թնամեաց
այս հզօր դաշնակցութեան : Բնաստիոյ
ցամաքային ամուր քաղաքներն են Թե-
րեզինշդատ , Բեդերվարտայն , Վո-
մուն , Վադդարոյ , Վաուլսպուրկ , Էո-
բոլշդատ , Սանդուա , Սերունա ևն :
Բնուր նաւահանգիստները Ս Էնետիկ ,
Նարա , Սբալադրոյ , Սակուզա , Բո-
լա և այլն : Նավային զօրութիւնը
Թեպէտ այս վերջի տարիներս բաւա-
կան յառաջացաւ՝ բայց և այնպէս Բնաս-
տիոյ այս կողմանէ Եւրոպիոյ երրորդ
կարգի տէրութիւններէն կը սեպուի .
ընդ ամէնը ունի 40 մեծ ու միջակ՝ շո-
գեվար և առագաստաւոր նաւ , 115
ալ նաւկէներ , որով կ'ըլլայ ընդ ամէնը
155 նաւ , 742 Թնդանօթով :

Ս արչուիւն : — Բնաստիոյ կայսրու-
թիւնը պայմանաւոր միապետութիւն է :
Երայսերական ժառանգութիւնը կրնայ
նաեւ իգական ցեղին անցնիլ՝ եթէ արու-
ժառանգ չգտնուի . կայսրը պատուոյ վե-
րաձայնութեամբ կը կոչուի Բաքերա-
կան Ս Էհափաուութիւն :

